ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՅՈՒՍ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

Խոսքում հնչյուններն առանձին-առանձին չեն արտասանվում, և արտասանական օրգաններն էլ մի հնչյունի արտաբերությունը չեն ավարտում ու նոր միայն անցնում հաջորդին։ Նախորդ հնչյունի արտաբերությունը չավարտած՝ արտասանական օրգանները պատրաստվում են հաջորդի արտաբերությանը և կամ՝ հաջորդ հնչյունի արտաբերության ժամանակ որոշ օրգաններ դեռևս գտնվում են նախորդի համար գրաված դիրքում։ Այսպես արտաբերական հիմքի վրա տեղի է ունենում հարևան հնչյունների ներթափանցում, հարմարում, որի հետևանքով հնչյունները հաճախ ենթարկվում են որակական կամ քանակական զգալի փոփոխությունների, տեղի է ունենում համակցական (комбинаторное) *հնչյունական փոփոխություն։*

Հայ լեզվաբանական գրականության մեջ հնչյունների՝ այլ հնչյունների հարևանությամբ ու ազդեցությամբ պայմանավորված համաժամանակյա փոփոխությունների մասին խոսվել է տարբեր առիթներով։ Հնչյունների համակցական փոփոխությունները, սակայն, հատուկ քննության առարկա չեն դարձել, չեն դիտվել հնչյունական այլ փոփոխությունների հետ հարաբերության մեջ։ Դա հետևանք է այն բանի, որ հայ լեզվաբանության մեջ հնչյունաբանական հետազոտությունների բնագավառում հստակորեն չեն սահմանազատված համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերը։ Լեզվական համակարգը համաժամանակյա կտրվածքով քննող հեղինակները, որպես կանոն, նկարագրել են լեզվի զարգացման ընթացքում կատարված հնչյունական փոփոխությունները, իսկ համաժամանակյա կտրվածքում կատարվող փոփոխությունները բավարար մեկնաբանություն չեն ստացել[1]*։*

Հայտնի է, որ յուրաքանչյուր տվյալ պահի լեզուն գործառում է որպես արդեն կազմավորված համակարգ, բայց միևնույն ժամանակ շարունակում է փոփոխվել։ Լեզուն և՛ կենդանի գործունեություն է, և՛ անցյալի արդյունք։ Այս են նկատի ունեցել XIX դ. վերջի և XX դ. սկզբի խոշորագույն գիտնականներ Ֆ. Ֆորտունատովը, Ի. Բոդուեն դը Կուրտենեն և հատկապես Ֆ. դը Սոսյուրը, երբ առաջ են քաշել լեզուն տարբեր (համաժամանակյա և տարաժամանակյա) հայեցակետերով քննելու անհրաժեշտությունը։ Նրանք պնդում էին, որ լեզվական փաստերի բացատրությունը հնարավոր է միայն լեզվում մի կողմից՝ կայուն, անփոփոխ համակարգային և մյուս կողմից՝ լեզվավիճակի տարբեր պատմական շրջանների համեմատությամբ հայտնաբերվող դինամիկ հարաբերությունների հստակ սահմանազատումով[2]*։ Ըստ Սոսյուրի, համաժամանակյա հայեցակետով պետք է քննել համագոյակից երևույթների հարաբերությունները՝ անտեսելով ժամանակի գործոնը, և տարաժամանակյա հայեցակետով՝ ժամանակի ընթացքում լեզվական միավորների կրած*

---

[1] *Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979 (այսուհետև՝ ԺՀԼ), էջ 125—160, ինչպես նաև՝ Վ. Դ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1953, Ա. Մ. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982, էջ 63—72 և այլն։*

[2] О. С. Широков, Введение в языковедение, М., 1985, с. 89; М. В. Панов, Современный русский язык. Фонетика, М., 1979, с. 146.

փոփոխությունները[3]։ Ճիշտ է, մեր օրերում լեզվաբանները չեն ընդունում Սոսյուրի՝ երկու հայեցակետերի նման խիստ սահմանազատումը[4] և գտնում են, որ չկան առանձին օբյեկտներ համաժամանակության և տարաժամանակության համար[5], սակայն նրանք համամիտ են, որ լեզվի ուսումնասիրության բնագավառում չի կարելի շփոթել այդ հայեցակետերը[6]։

Նշանավոր սովետական լեզվաբան Ռ. Ավանեսովը սահմանազատում է լեզվի հնչյունական կողմի հետազոտման երկու ուղիները, դրանց ընդգրկման ոլորտները՝ համապատասխան համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերի։ «Բացահայտել իր զարգացման տվյալ փուլում լեզվի հնչյունական համակարգը, այսինքն՝ տվյալ լեզվում տարբերակվող՝ խոսքի հընչյունների (ավելի ճիշտ՝ հնչույթների ...) կազմը, նրանց փոփոխությունները որոշակի դիրքային պայմաններում, երբ մտնում են որոշակի օրինաչափ հարաբերությունների մեջ—այսպիսին է նկարագրական հնչյունաբանության խնդիրը»[7],— գրում է նա։ Լեզվի պատմության տարբեր փուլերի ընթացքում հնչյունական համակարգի զարգացման ուսումնասիրությունը Ռ. Ավանեսովը համարում է պատմական հնչյունաբանության խնդիրը[8]։

Համակցական հնչյունափոխությունները նույն ժամանակագրական կտրվածքում համագոյակից հնչյունների հարևանությամբ պայմանավորված փոխազդեցությունների արդյունք են։ Դրանք, ի տարբերություն պատմականների, արդեն ավարտված իրողություններ չեն, այլ կատարվում են կենդանի խոսքում՝ համաձայն լեզվի արտասանական առանձնահատկությունների։

Յուրաքանչյուր լեզու իր զարգացման տվյալ պահին բնութագրվում է որոշակի արտասանական առանձնահատկություններով՝ խոսքում հնչյունների կապակցության, վանկերի կազմման, վանկաբաժանման, շեշտադրման և այլ կայուն օրենքներով։ Լեզվի հնչյունական կողմում ընդհանուր բնույթ ունեցող բոլոր փոփոխություններն էլ, կարելի է ասել, ուղղակիորեն կապված են արտասանական առանձնահատկությունների հետ։ Լեզվի զարգացման ընթացքում արտասանական առանձնահատկություններում կատարված ամեն մի փոփոխություն իր արտահայտությունն է ստանում ընդհանուր բնույթի հնչյունափոխություններում։ Այսպես՝ գրաբարն ուներ նույն վանկում երկու և երեք ձայնավոր հնչյուններ համատեղելու հատկություն, այսինքն՝ ուներ երկբարբառներ և եռբարբառներ։ Հետագայում բանավոր հայերենը, ինչպես աշխարհի շատ այլ լեզուներ[9], իր զարգացման ընթացքում կորցրեց արտա-

---

3 Ф. де Соссюр, Труды по языкознанию, М., 1977, с. 47.

4 Տարաժամանակյա հնչույթաբանության հիմնադիր Ռ. Յակոբսոնը նկատում է, որ «...ոչ մի լեզվական փոփոխություն չի կարող հասկանալի լինել կամ բացատրվել առանց հաշվի առնելու լեզվական համակարգը, որը կրում է այդ փոփոխությունը, և այդ համակարգի շրջանակներում փոփոխության հետևանքները. և ընդհակառակը, չի կարելի լիովին և նույնականորեն նկարագրել լեզուն, առանց հաշվի առնելու այն փոփոխությունները, որոնք արդեն սկսվել են, բայց դեռ չեն ավարտվել։ Սոսյուրի հռչակած «ժամանակային հարաբերությունների և համակարգային հարաբերությունների միաժամանակյա ուսումնասիրության արգելումը» կորցնում է իր ուժը» (Р. Якобсон, Избранные работы, М., 1985, с. 413):

5 Э. Косериу, Синхрония, диахрония и история (Новое в лингвистике, вып. III, М., 1963, с. 170).

6 Իսպանացի լեզվաբան է. Կոսերիուն իրավացիորեն նկատում է, որ «...որոշակի «լեզվավիճակի» համաժամանակյա ուսումնասիրության ժամանակ անհնար է միաժամանակ դիտարկել մյուս վիճակները և մի պահի մեջ խառնել լեզվի պատմության մի ամբողջ շարք պահեր. դա կարող է հանգեցնել տրամաբանորեն չկապակցված և քաոսային նկարագրության» (տե՛ս Э. Косериу, նշվ. աշխ., էջ 341)։

7 Р. И. Аванесов, Фонетика современного русского литературного языка, М., 1956 с. 5.

8 Նույն տեղում։

9 В. В. Шеворошкин, Звуковые цепи в языках мира, М., 1969, с. 79.

սանական այդ առանձնահատկությունը, տեղի ունեցավ երկբարբառների մեներարբառացում։ Հայերենի արտասանական առանձնահատկությունների փոփոխությունների հետևանք են նաև բառասկզբում միջնալեզվային կիսաձայն յ-ի անցումը կոկորդային խուլ հ-ի, ձայնավորներից առաջ հ-ի առաջացման միտումը (բառասկզբում շնչի ուժեղացում), բառավերջում ի ձայնավորի, յ և ն ձայնորդների անկման դեպքերը (բառավերջի դիրքի թուլացում) և այլն։

Արտասանական առանձնահատկությունները ընդհանուր բնույթի հնչյունական փոփոխությունների պատճառ են դառնում նաև կայուն գործառելիս[10]։ Դրա հետևանք են դիրքային և համակցական փոփոխությունները, երբ հնչյունները ուժեղ դիրքի համեմատությամբ որակապես կամ քանակապես փոփոխված են հանդես գալիս թույլ դիրքերում, իրենց համար պակաս նպաստավոր հնչյունական շրջապատում[11]։ Այդպիսի հնչյունատիպերի երևան գալը լեզվաբանական օրինաչափություն է[12], այսինքն՝ լեզվում գոյություն ունեն խոսքի կազմավորման կայուն օրենքներ, որոնց համաձայն էլ հնչյունները ենթարկվում են օրինաչափ փոփոխությունների։ Օրինակ, ձայնավորների համար նպաստավոր է շեշտակիր դիրքը և պակաս նպաստավոր՝ անշեշտը, բաղաձայնների համար ավելի նպաստավոր են բառասկիզբը և բառամեջը (ձայնավորներից առաջ կամ նրանց միջև) և պակաս նպաստավոր՝ բառավերջը և այլն[13]։

Հատկանշական է, որ հնչյունների համակցական փոփոխությունները նաև դիրքային են. չէ՞ որ տվյալ հնչյունի վրա ազդող հնչյունական շրջապատը նաև որոշակի դիրք է։ Դիրքային փոփոխության դեպքում վճռորոշ է միայն հնչաբառում հնչյունի գրաված դիրքը, հատկապես՝ շեշտի նկատմամբ։ Հնչյունական շրջապատն այստեղ էական դեր չի խաղում։

Հնչյունների՝ ուժեղ և թույլ դիրքերով պայմանավորված տարբերությունները երևան են գալիս ոչ միայն տարբեր ձևույթներում, այլև նույն ձևույթի համագոյակից տարբերակներում։ Վերջինները հերթագայական փոփոխություններ են։ Սրանք առաջ են գալիս, երբ բառաբարդման կամ բառաթեքման հետևանքով տվյալ ձևույթի որևէ հնչյուն հայտնվում է իր համար անբարենպաստ դիրքում կամ հնչյունական շրջապատում։ Դարեր շարունակ հայերենում կայուն գործառություն ուներ արտասանական մի առանձնահատկություն, որի համաձայն է, ի, ու ձայնավորները, նոր դիրքում զրկվելով շեշտից, հերթագայվում էին այլ հնչյունով կամ զրոյով[14]։ Արտասանական մեկ այլ առանձնահատկությամբ հայերեն խոսքը բառում սովորաբար չի զուգակցում ձայնեղ և խուլ բաղաձայններ, ուստի, երբ բառաբարդման կամ բառաթեքման ժամանակ ուժեղ դիրքի ձայնեղ բաղաձայնը հայտնվում է խուլից առաջ, նա ևս խուլ է հնչում, օրինակ՝ բազուկ—[բասկաթոռ], վազել—[վասք], ճովիա—[ճոֆտաշուշան], ծաղիկ—[ծաիկել] և այլն։

---

10 Լեզվական կայուն օրենքների գործառությամբ պայմանավորված հնչյունափոփոխությունները այլ կարգի ընդհանուր փոփոխություններից հստակորեն սահմանազատել է ռուս լեզվաբան Ա. Ռեֆորմատսկին։ Նա տարբերում է լեզվի գործառության օրենքները (դրանք կենդանի հնչյունական պրոցեսներ են, որ որոշվում են դիրքով) զարգացման կամ պատմական օրենքներից. սրանք կազմում են հնչյունափոփոխությունների հաջորդական փուլերը (տե՛ս А. А. Реформатский, Введение в языковедение. М., 1967, с. 488).

11 Ուժեղ և թույլ հնչյունադիրքերի, հիմնական և փոփոխված հնչյունատիպերի մասին տե՛ս ԺՀԼ, հ. 1, էջ 31—32, Л. В. Щерба, Фонетика французского языка, М., 1963, с. 18; Л. Л. Буланин, Фонетика современного русского языка. М., 1970. с. 32—36.

12 Л. Л. Буланин, նշվ. աշխ., էջ 34։

13 ԺՀԼ, հ. 1, էջ 31—32։

14 Այս երևույթն արդի հայերենում գործող օրինաչափություն չէ, այսինքն՝ հերթագայությունը ավանդական է (տե՛ս ԺՀԼ, հ. 1, էջ 129)։

Այսպիսով, հնչյունների համակցական փոփոխություններն ունեն ընդհանուր բնույթ, որովհետև դրանք ոչ թե այս կամ այն բառի որևէ հնչյունակապակցության մեջ հանդիպող պատահական երևույթներ են, այլ որոշակի հնչյունակապակցություններում օրինաչափորեն երևան եկող իրողություններ։

Ի տարբերություն ընդհանուր բնույթի հնչյունական փոփոխությունների, մասնավոր հնչյունափոխությունները[15] հիմնականում պայմանավորված չեն լեզվի արտասանական առանձնահատկություններով, չնայած սրանք ևս հաճախ ունեն արտաբերությունը հեշտացնելու միտում։ Մասնավոր հնչյունափոխություններից արտասանական առանձնահատկություններով պայմանավորված են նրանք, որոնք արդյունք են համակցական փոփոխությունների հետագա զարգացման։ Հայտնի է, որ ամենօրյա խոսակցական հայերենում երկշրթնային բ, պ, փ բաղաձայնները նկատելիորեն ազդում են իրենց նախորդող ռնգային ն ձայնորդի վրա, որի հետևանքով ն-ն նմանվում է մ ռնգայինին, այսինքն՝ առկա է հակասություն արտասանական մտադրության և արտասանության արդյունքի միջև[16]։ Միաժամանակ, հայերենի զարգացման նախորդ փուլերում երբեմն տեղի է ունեցել նշված դիրքում ն-ի լրիվ անցում մ-ի, այսինքն՝ համակցական հնչյունական փոփոխության հիման վրա առաջ է եկել մասնավոր պատմական առնմանական հնչյունափոխություն ըստ արտաբերման տեղի, որի հետևանքով վերացել է հակասությունը արտասանական մտադրության և արտասանության արդյունքի միջև։ Այդպիսին է, օրինակ, գործիականի բ-ին առաջ, ինչպես նաև՝ ընդբռնել—ընբռնել—ըմբռնել, ճանապարհ—ճանպա—ճանփա—ճամփա և այլ բառերում ն—մ փոփոխությունը[17]։ Այսօր մենք անձամբ, ըմբռնել, ճամփա և նման այլ բառերում գիտակցում և արտասանում ենք մ հնչյունը։ Այդպիսի փոփոխություն են ներկայացնում նաև զfողել—սfողել, զփոփել—սփոփել բառերը, որոնցում զ նախդիրը հաջորդ խուլ բաղաձայնների ազդեցությամբ փոխվել է ս-ի՝ հավանաբար այլևս որպես նախդիր չգիտակցվելու հետևանքով։

Համակցական հնչյունափոխությունը, այսպիսով, տեղի է ունենում հընչյունի արտասանական մտադրության և, հնչյունական շրջապատի ազդեցության հետևանքով, նրա իրացման միջև առկա հակասության պատճառով։ Հնչյունական այս փոփոխությունը իր ընդհանրությամբ հարաբերակից է դիրքային և ընդհանուր պատմական հնչյունափոխություններին։ Միաժամանակ, համակցական և դիրքային հնչյունափոխությունները հակադրվում են ընդհանուր պատմականներին՝ որպես համաժամանակյա երևույթներ, իսկ համակցական հնչյունական փոփոխությունները՝ մասնավոր հնչյունափոխություններին իրենց ընդհանուր բնույթով և համաժամանակությամբ։ Համակցական հնչյունափոխությունների հիման վրա, ինչպես արդեն տեսանք, կարող են առաջանալ մասնավոր պատմական փոփոխություններ։

Հնչյունների համակցական փոփոխությունների մեջ պետք է տարբերել հերթագայությունները սովորական հնչյունափոխություններից։ Հերթագայական փոփոխությունների դեպքում առաջանում են նաև որակական տարբերություններ[18] (օրինակ՝ բազուկ—[բասկաքոռ], վազել—[վասf] և այլն),

---

15 Լեզվում արձանագրվող մասնավոր բոլոր հնչյունափոխությունները պատմական են։

16 Ֆրանսիացի հայտնի լեզվաբան Ա. Մարտինեն ենթադրում է, որ յուրաքանչյուր հընչույթ իրենից ներկայացնում է նյարդամկանային մի միավոր, որի ցանկացած իրացում ցանկացած ենթատեքստում բացարձակապես միակերպ նյարդային իմպուլսի արդյունք է։ Նա գտնում է, որ հնչույթի յուրաքանչյուր արտաբերություն ենթադրում է միևնույն արտաբերական նախատիպը, որը սակայն ձևափոխված է ենթատեքստի ազդեցությամբ (А. Мартине, Принцип экономии в звуковых изменениях, М., 1960, с. 231).

17 ԺՀԼ, հ. 1, էջ 154։

18 Այս տարբերությունները խորհրդային լեզվաբանության մեջ մեկնաբանվում են երկու հայեցակետով. լենինգրադյան դպրոցի ներկայացուցիչները (Մ. Մատուսևիչ, Լ. Զինդեր, Վ. Լիտկին և ուրիշներ), զարգացնելով Շչերբայի տեսությունը, կարծում են, որ հնչույթների այդ

մյուս դեպքերում այդ տարբերությունները քանակական են կամ ենթահընչույթային[19]։

Համակցական հնչյունափոխությունների ժամանակ առաջացող որակական տարբերությունները գնահատելիս հետևում ենք մոսկովյան հնչյունաբանական դպրոցին և գտնում, որ հերթագայվող հնչյունները հնչույթաբանական մակարդակում ներկայացնում են նույն հնչյունատիպը, որովհետև իրենց հնչմամբ տարբեր լինելով, դրանք օժտված են հանրության կողմից գիտակցված իմաստատարբերակիչ մեկ նշանակությամբ, որի հետևանքով էլ կատարում են միևնույն իմաստատարբերակիչ դերը[20]։ Որակական տարբերությունների դրսևորման դեպքում մոսկովյան դպրոցի ներկայացուցիչները խոսում են տարբերակների, իսկ քանակականների դեպքում՝ փոփոխակների մասին[21]։ Համաձայն այդ բաժանման, ռազուկ և բազկաթոռ բառերի զ և ս հնչյունները զ հնչույթի տարբերակներն են, իսկ կան և կին բառերի քմայնացած և սովորական կ հնչյունները հնչույթի փոփոխակներն են։

Ինչպես արդեն նշել ենք, ենթատեքստի ազդեցությամբ կատարվող հընչյունական փոփոխությունը լեզվաբանական օրինաչափություն է, այսինքն՝ և՛ տարբերակները, և՛ փոփոխակները տվյալ դիրքերում պարտադիր երևույթներ են։ Դա նշանակում է, որ տվյալ տարբերակը կամ փոփոխակը միակ հնարավորն է համապատասխան դիրքում, այսինքն՝ որևէ հնչույթի փոփոխված ձևերը չեն հակադրվում իրար նույն պայմաններում և գտնվում են փոխբացառող բաշխման մեջ[22]։

Այսպիսով՝ լեզվում, համակցական հնչյունափոխական երևույթների մշտական գործառության պայմաններում, գոյակցում են հիմնական հնչյունատիպը, հնչույթի տարբերակներն ու փոփոխակները։ Հայերենի հիմնական հնչյունատիպերը ուսումնասիրվել են և՛ տեսականորեն, և՛ փորձառական ճանապարհով[23]։ Հնչույթների տարբերակների ու փոփոխակների տեսական և փորձառական ուսումնասիրությունը, կարծում ենք, հնարավորություն կտա գիտականորեն ճիշտ պատկերացում կազմելու խոսքում կատարվող հնչյունափոխական բազմազան երևույթների վերաբերյալ։

ձևափոխությունները լեզվի մեջ ձայնական տեսակետից այլասեռ, տարբեր հնչույթների դրսևորումներ են։ Մոսկովյան հնչյունաբանական դպրոցի ներկայացուցիչները (Ռ. Ավանեսով, Պ. Կուզնեցով, Ա. Ռեֆորմատսկի և ուրիշներ), փոփոխված ձևերը համարելով լեզվական մեկ միավորի ձևափոխություններ, դրանք միավորում են մեկ խմբի մեջ, դիտում որպես հնչյունադիրքով պայմանավորված՝ հնչույթի այնպիսի ձևափոխություններ, որոնք իրենց հնչմամբ նույնանում են այլ հնչույթների հետ (տե՛ս Ա. Արամյան, ժամանակակից հայերենի ձայնավորները, Երևան, 1962, էջ 15—18)։

19 Գ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 93։

20 Ա. Արամյան, նշվ. աշխ., էջ 16, Л. Л. Буланин, նշվ. աշխ., էջ 198։

21 А. А. Реформатский, նշվ. աշխ., էջ 217, М. Матусевич, Современный русский язык. Фонетика, М., 1976, с. 38.

22 ժՀլ, հ. 1, էջ 30։

23 ժՀլ, հ. 1, էջ 5—125, Ա. Արամյան, նշվ. աշխ. А. А. Хачатрян, В. Н. Айрапетян, Экспериментальное исследование согласных фонем литературного армянского языка, Ереван, 1971; А. А. Хачатрян, Сравнительный анализ гласных армянского и английского языков, Ереван. 1963.

КОМБИНАТОРНЫЕ ИЗМЕНЕНИЯ ЗВУКОВ И ИХ СООТНОШЕНИЕ С ДРУГИМИ ЗВУКОВЫМИ ИЗМЕНЕНИЯМИ

В. Л. КАТВАЛЯН

Резюме

В речи происходит проникновение и приспособление артикуляций соседних звуков, вследствие чего звуки часто подвергаются значительным качественным и количественным изменениям—происходит комбинаторное (коартикуляционное) звуковое изменение.

В отличие от исторических комбинаторные звукоизменения не являются совершенными и законченными, они происходят в речи носителей языка в соответствии с произносительными особенностями этого языка в результате наложения артикуляционных фаз двух соседних звуков и возникают спонтанно в процессе речи. По своим наиболее общим чертам они соотносительны с позиционными и историческими звукоизменениями. Одновременно комбинаторные и позиционные изменения противопоставляются общим историческим как синхронные явления. С другой стороны, комбинаторные изменения противопоставляются частным звукоизменениям своей общностью и синхронностью. На их основе могут возникать частные исторические изменения.